ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄՆԵՐ

Անվանի հայագետ Մանուկ Աբեղյանը ծնվել է 1865 թ. մարտի 17-ին երբեմնի հայանիստ Նախիջևանի Աստապատ գյուղում, ուսում է առել ոչ միայն Հայաստանում, այլև Գերմանիայում, գիտական լայն գործունեություն է ծավալել իր հայրենի բնօրրան Հայաստանում՝ անցյալ դարի առաջին կեսի հումանիտար գիտությունների ամենաճանաչված հիմնակություններում՝ համալսարան, ակադեմիա: Նա եղել է լայն գիտելիքների տեր մտավորական և անմնացորդ նվիրյալ իր երկրին ու նրա առաջընթացն ապահովող գիտությանը:

Աբեղյանը նոր էջ է բացել հայ բանահավաքչության և բանագիտության, հայ հին ու նոր գրականության և հայերենի տեսության հարցերի լուծումներում՝ իմացության նոր շնչով և մտածողության յուրովի մղումներով:

Չկա նոր ժամանակների հայերենագիտության որևէ բնագավառ, որտեղ իր՝ աբեղյանական խոսքն ասած չլինի գիտության այդ մեծ մշակը: Նրա գրքերը իր օրերին և հետագայում տպագրվել են առանձին և «Երկեր» վերնագրված հատորներով: Նրա մասին գրել և գնահատության փորձեր են եղել մի շարք առիթներով, շատ հայագետների, լրագրող-հրապարակախոսների, գրողների կողմից: Նրա բանագիտական վաստակին հատուկ մենագրություն է նվիրվել, նրա՝ արդի հայերենի տեսության վերաբերյալ կա արժեքավոր աշխատություն: Մեծ հայագետի գիտական վաստակը բազմիցս, տարբեր առիթներով գնահատվել է:

Եվ ահա հրապարակի վրա նրա իմաստալից, ինչ-որ տեղ նեղված կյանքին և վաստակին վերաբերող մի շատ ուշագրավ գիրք՝ «Հուշարձան Մանուկ Աբեղյանին» (Ե., ԵՊՀ հրատ., 2023, 324 էջ), հիրավի մի նոր հիշողություն՝ հնից և նորի համատեղ կազմված (շնորհակալ գործ է կատարել պրոֆ. Ա. Աբաջյանը):

Լավ հրատարակությամբ երևան եկած այս ժողովածուն, բացի առաջաբանից, ներառում է երեք մաս՝ «Աբեղյանը ժամանակակիցների հայացքով» (էջ 21-128), «Մանուկ Աբեղյան գիտնականը» (էջ 129-154), մեծ գիտնականին և նրա գործին առնչվող «Գիտական հոդվածներ» (155-322): Ընդ սմին այդ մասերից, օրինակ, 3-րդը բաժանված է երեքի՝ լեզվաբանություն, գրականագիտություն, մանկավարժություն, որոնցում քննվում են Աբեղյանի ահռելի ժառանգության գնահատության հարցեր:

Իսկ ի՞նչ հոդվածներ են, որ նվիրված են հայ մեծանուն հայագետի կյանքին և նրա գիտական ժառանգությանը, ո՞վքեր են դրանց հեղինակները:

Առաջինի պատասխանը պարզ է, ուստի նշելու կարիք չկա, իսկ երկրորդը՝ հետաքրքրիր է: Ներկայանում են անվանի գրողներ և տարբեր բնագավառների գիտնականներ, ժամանակի գիտական հանդեսների և մամուլի աշխատողներ (հոբելյանական և այլ առիթներով), մեր օրերի բանասերներ՝ գրականագետ կամ լեզվաբան, որպիսով ամբողջանում է մեծն Աբեղյանի դիմապատկերը հայ նոր մշակույթի ֆոնին:

Նման գիրք ունենալը և ընթերցելը, առավել ևս՝ եթե գիտության մարդ ես, քո աշխատանքներում այն նկատի առնելը կարևոր է և նպաստավոր: